Հաստատված է

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

գիտական խորհրդի 2 սեպտեմբերի 2010թ. նիստում

Տնօրեն Կ. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման (այսուհետև՝ շրջանավարտների հարցման) կանոնակարգը սահմանում է ԵՊՀ ԻՄ րջանավարտների կողմից համալսարանում ստացած կրթության արդյունավետության և կրթական ծառայությունների որակի գնահատման կարգը:

1.2. Շրջանավարտների հարցումը հանդիսանում է ԵՊՀ ԻՄ որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչը:

1.3. Շրջանավարտների հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը:

2. Շրջանավարտների հարցման անցկացումը

2.1. Շրջանավարտների հարցումն իրականացվում է բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական ուսումնական տարվա վերջում (հունիս-հուլիս ամիսներին):

2.2. Շրջանավարտների հարցումն իրականացվում է համալսարանի ուսումնամեթոդական վարչության կողմից:

2.3. Շրջանավարտները իրենց ֆակուլտետի դեկանատից ստանում են հարցաթերթը, լրացնում և դիպլոմները ստանալիս հանձնում են ուսումնամեթոդական վարչության կազմակերպչական բաժին:

2.4. Շրջանավարտների հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (հավելված 1), որում շրջանավարտը 5 միավորանոց սանդղակով գնահատում է առաջադրված հարցերը:

2.5. Շրջանավարտների հարցումն անանուն է:

3. Շրջանավարտների հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Շրջանավարտների հարցման արդյունքները մշակվում են ԵՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում կամ մասնաճյուղի համարժեք ստորաբաժնում:

3.2. Հարցաթերթում կատարված ուղղումները չեն հաշվարկվում:

4. Շրջանավարտների հարցման արդյունքների օգտագործումը

4.1. Շրջանավարտների հարցման արդյունքները քննարկվում են ֆակուլտետների խորհուրդներում, այնուհետև մասնաճյուղի գիտական խորհրդում՝ մասնաճյուղի գործունեության տարբեր ասպեկտների որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով:

ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման

ՀԱՐՑԱԹԵՐԹ - 2010

1. Բուհի և մասնագիտության ընտրությանը նպաստող գործոններ

Կրթական ո՞ր աստիճանն եք ավարտել այս տարի

Պատրաստվու՞մ եք շարունակելու Ձեր ուսումը

Հայտնի է՞ արդյոք՝ որտեղ եք աշխատելու

Եթե աշխատում եք, խնդրում ենք նշել՝ ում օգնությամբ եք գտել Ձեր աշխատանքը

1-ի՞ն հայտով եք ընդունվել Ձեր մասնագիտությամբ

2. Ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից

2.1. Դասընթացների նպատակը և խնդիրները ուսանողին ներկայացվում են հստակ

2.2. Դասընթացների մատուցման ձևը կարելի է գնահատել՝

2.3. Դասընթացների օգտակարությունը մասնագիտական գործունեության մեջ կարելի է գնահատել՝

2.4. Ուսումնառությունը մասնաճյուղում նպաստում է մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը

2.5. Ուսումնառությունը մասնաճյուղում տալիս է տեսական գիտելիքներ

2.6. Ուսումնառությունը մասնաճյուղում տալիս է գործնական հմտություններ

2.7. Ուսումնառությունը մասնաճյուղում ապահովում է հաղորդակցական և կազմակերպչական հմտություններ

2.8. Ուսումնառությունը մասնաճյուղում ապահովում է օտար լեզուների իմացություն

2.9. Ինչպե՞ս եք գնահատում առաջարկվող կրթական ծրագրերի ուսումնամեթոդական ապահովվածությունը

2.10. Ինչպե՞ս եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը

2.11. Մասնագետի պատրաստման ուղվածությունը և մակարդակը համապատասխանում է աշխատաշուկայի պահանջներին

2.12. Ուսանողների գիտելիքներն օբյեկտիվ են գնահատվում

2.13. Ինչպե՞ս եք գնահատում ավարտական ատեստավորման օբյեկտիվությունը

3. Ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղի ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից

3.1. Լսարանների վիճակը և կահավորանքը կարելի է գնահատել՝

3.2. Ուսումնական լաբորատորիաների վիճակը և կահավորանքը կարելի է գնահատել՝

3.3. Մասնաճյուղի համակարգչային սրահների վիճակը, կահավորանքը և մատչելիությունը կարելի է գնահատել՝

3.4. Մասնաճյուղի համացանցի (ինտերնետ) մատչելիությունը կարելի է գնահատել՝

3.5. Հաճա՞խ եք օգտվում մասնաճյուղի գրադարանից կամ ընթերցասրահից

3.6. Գրադարանը և ընթերցասրահները տրամադրում են ժամանակակից մասնագիտական գրականություն

3.7. Գրադարանի ընթերցասրահների վիճակը և կահավորանքը կարելի է գնահատել՝

3.8. Գրադարանի և ընթերցասրահների աշխատաժամերը և սպասարկումը կարելի է գնահատել՝

3.9. Հաճա՞խ եք գնում անհրաժեշտ ուսումնական և մասնագիտական գրականություն

3.10. Ինչպե՞ս եք կարևորում մասնաճյուղի կարիերայի կենտրոնի օգտակարությունը

4. Ուսանողների բավարարվածությունը համալսարանական միջավայրից

4.1. Գո՞հ եք արդյոք

4.1.1. Մասնաճյուղի ղեկավարությունից

4.1.2. Ֆակուլտետի ղեկավարությունց

4.1.3. Պրոֆեսորադասախոսական կազմից

4.2. Դրական կամ բարձր գնահատական ստանալու նպատակով դասախոսի համար գոնե մեկ անգամ կատարե՞լ եք ծառայություն, դրամական կամ այլ նվիրատվություն

4.3. Արդյոք հստակ և թափանցի՞կ են ուսանողների դիմումների և բողոքների արտահայտման ընթացակարգերը և մեխանիզմները

5. Ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղի կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության արժանահավատությունից

5.1. Մասնաճյուղի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը համապատասխանու՞մ է իրականությանը

5.1.1. Աշխատաշուկայում մասնագիտության բարձր պահանջարկվածության մասին

5.1.2. Գործնական մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման հնարավորության մասին

5.1.3. Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների մասին

5.2. Ընդհանուր առմամբ ինչպե՞ս եք գնահատում ԵՊՀ ԻՄ-ում Ձեր ստացած կրթությունը

5.3. Խորհուրդ կտա՞ք ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՄ

Ձեր կարծիքները և առաջարկները.